ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 430
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Անտառուտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Աշտարակ համայնքի (Անտառուտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Անտառուտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Անտառուտ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-010-0111-0101 կադաստրային ծածկագրով 0.125 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	02-010-0111-0101 կադաստրային ծածկագրով 0.125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

- Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գրությամբ նշված պահանջը՝ հողամասում առկա ինքնակամ կառույցների օրինականացման պայմանը:

3. Աշտարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել (Անտառուտ բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Անտառուտ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «30» «նոյեմբերի» 2023 թ.